



ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

10.04.2017թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ 34/17

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «Հիդրո Սթորմ» ՍՊԸ-ի 20.03.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-34/17 բողոք) և կից փաստաթղթերը, «ԵԲ-ԲԸԱՇՁԲ-17/66» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերը և ԳԲԽ-34/17 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 05.04.2017թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1. «Հիդրո Սթորմ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Հիդրո Սթորմ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 20.03.2017թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ մասնակցել են Երևանի քաղաքապետարանի կարիքների համար **Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի հ.19 մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքների** ձեռքբերման «ԵԲ-ԲԸԱՇՁԲ-17/66» ծածկագրով բաց ընթացակարգին, և ըստ գնահատող հանձնաժողովի որոշման՝ զբաղեցրել է առաջին տեղը:

14.03.2017թ. թիվ 3 արձանագրության 1 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը մերժել է «Հիդրո Սթորմ» ՍՊԸ-ի հայտը այն հիմնավորմամբ, որ հայտը ներկայացվելու օրվա դրությամբ Ընկերությունը ունեցել է ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություն 3.759.150 ՀՀ դրամի չափով և երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է ներկայացված գնային առաջարկից:

Ընկերությունը գնահատող հանձնաժողովի որոշումը համարում է անընդունելի, քանի որ ունի համախառն եկամուտ, որը մի քանի անգամ մեծ է գնառաջարկի արժեքից և չունի ու երբևէ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություն ոչ մի հարկատեսակի գծով:

Ընկերությունը գրանցված է որպես հարկատու Հրազդանի ՏՀՏ-ում և ընկերության պարտքի ու տարեկան շրջանառության մասին տեղեկությունը տրամադրում է Հրազդանի ՏՀՏ-ն, ում իսկ բանավոր պնդմամբ ու տրամադրված գրավոր տեղեկանքով պարզ է դառնում, որ գնահատող հանձնաժողովին ՊԵԿ այլ ստորաբաժանման կողմից հնարավոր տրամադրված եզրակացությունը չի համապատասխանում իրականությանը կամ մեկնաբանվել է յուրովի:

Ընկերությունը խնդրում է՝ կիրառել ժամանակավոր միջոց՝ կասեցնել պատվիրատուի կամ գնահատող հանձնաժողովի կողմից պայմանագիր կնքելու գործընթացը՝ մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում կայացնելը: Չեղյալ համարել «ԵԲ-ԲԸԱՇՁԲ-17/66» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Հիդրո Սթորմ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

2. Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

Կենտրոնը 21.03.2017թ.-ին թիվ 02/04.1/1061-17 Պատվիրատուին ուղղված գրությամբ խնդրել էր եռօրյա ժամկետում ներկայացնել «ԵԲ-ԲԸԱՇՁԲ-17/66» ծածկագրով գնման ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները և տալ կարծիք:

Պատվիրատուն 27.03.2017թ. թիվ 02/61-17232h գրությամբ հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանը ղեկավարվելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (այսուհետև՝ Կարգ)

47-րդ կետի 1-ին մասի դրույթներով՝ 07.03.2017թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում է ներկայացրել առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը 11.03.2017թ. տրամադրել է հարցման մասին եզրակացություն, համաձայն որի «Հիդրո Սթորմ» ՍՊԸ-ն «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/66» ծածկագրով գնման ընթացակարգին գնային առաջարկ ներկայացնելու դրությամբ (06.03.2017թ.) ունի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ 3759150 ՀՀ դրամի չափով, ինչպես նաև մասնակցի երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է ներկայացված գնային առաջարկից;

Վերը նշվածի համաձայն՝ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով Կարգի 48-րդ կետով մերժել է «Հիդրո Սթորմ» ՍՊԸ-ի հայտը:

3. ԳԲԽ-34/17 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 05.04.2017թ. եզրակացությունը և առաջարկել է «Հիդրո Սթորմ» ՍՊԸ-ի 20.03.2017թ. ներկայացրած բողոքը բավարարել:

4. ԳԲԽ-34/17 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-34/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Հիդրո Սթորմ» ՍՊԸ-ն մասնակցել է Երևանի քաղաքապետարանի կարիքների համար՝ **Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի հ.19 մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքների** ձեռքբերման «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/66» ծածկագրով բաց ընթացակարգին:

2. «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/66» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.03.2017թ. թիվ 2 արձանագրության 5.1 կետի՝ Ընկերությունը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից՝ **3.450.000 ՀՀ դրամ գնային առաջարկով**:

3. Պատվիրատուն, ղեկավարվելով Կարգի 47-րդ կետի 1-ին մասի դրույթներով, 07.03.2017թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում է ներկայացրել առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

4. ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը 11.03.2017թ. տրամադրել է եզրակացություն, համաձայն որի «Հիդրո Սթորմ» ՍՊԸ-ն «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/66» ծածկագրով գնման ընթացակարգին գնային առաջարկ ներկայացնելու դրությամբ (06.03.2017թ.) ունի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ **3759150 ՀՀ դրամի** չափով, ինչպես նաև մասնակցի երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը (**1.222.517 ՀՀ դրամ**) պակաս է ներկայացված գնային առաջարկից (**3.450.000 ՀՀ դրամ**):

5. ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի Հրազդանի տարածքային հարկային տեսչության պետ Ռ. Գևորգյանի կողմից տրամադրած 20.03.2017թ. թիվ 03-358 գրության համաձայն՝ Ընկերության կողմից ներկայացված շահութահարկի հաշվարկների տարեկան համախառն եկամուտները կազմել են՝ **2014թ-ին, 2015թ-ին 1,222,517 ՀՀ դրամ, 2016թ-ին 124,480,774 ՀՀ դրամ (ընդհանուր՝ 125,703,291 ՀՀ դրամ)**: Ընկերությունը առ 06.03.2017թ. դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի՝ հիմք Հրազդանի ՏՀՏ 20.03.2017թ-ին ներկայացված ՀՀ Վարչական դատարանի (ՎԴ/6383/05/15) վճիռը:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը, ուսումնասիրելով «Հիդրո Սթորմ» ՍՊԸ-ի 20.03.2017թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, Երևանի քաղաքապետարանի «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/66» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի հրավերը, «Գնումների մասին» ՀՀ օրենքը (այսուհետև նաև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգը (այսուհետև նաև՝ Կարգ), գտնում է, որ «Հիդրո Սթորմ» ՍՊԸ-ի 20.03.2017թ. ներկայացրած բողոքը ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք՝

1) որոնք դատական կարգով ճանաչվել են սնանկ.

2) որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով.

3) որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է.

4) որոնք ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Կարգի 67-րդ կետի համաձայն «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցն իր հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝

ա. երեք հաշվեդրու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից.

«Հիդրո Սթորմ» ՍՊԸ-ն 06.03.2017թ-ին հայտ է ներկայացրել Երևանի քաղաքապետարանի կարիքների համար՝ **Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի հ.19 մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքների** ձեռքբերման «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/66» ծածկագրով գնման բաց ընթացակարգին:

Ըստ «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/66» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.03.2017թ. թիվ 2 արձանագրության 5.1 կետի՝ Ընկերությունը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից՝ **3.450.000 ՀՀ դրամ գնային առաջարկով**:

Պատվիրատուն, ղեկավարվելով Կարգի 47-րդ կետի 1-ին մասի դրույթներով, 07.03.2017թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում է ներկայացրել առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը 11.03.2017թ. տրամադրել է եզրակացություն, համաձայն որի «Հիդրո Սթորմ» ՍՊԸ-ն «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/66» ծածկագրով գնման ընթացակարգին գնային առաջարկ ներկայացնելու դրությամբ (06.03.2017թ.) ունի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ **3759150 ՀՀ դրամի** չափով, ինչպես նաև մասնակցի երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը (**1.222.517 ՀՀ դրամ**) պակաս է ներկայացված գնային առաջարկից (**3.450.000 ՀՀ դրամ**):

«ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/66» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, 14.03.2017թ. թիվ 3 արձանագրության 1 կետի համաձայն, որոշել է մերժել Ընկերության հայտը:

Ընկերությունը 20.03.2017թ-ին Խորհրդին ներկայացված բողոքով ներկայացրել է ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի Հրազդանի տարածքային հարկային տեսչության պետ Ռ. Գևորգյանի կողմից տրամադրած 20.03.2017թ. թիվ 03-358 գրությունը, համաձայն որի Ընկերության կողմից ներկայացված շահութահարկի հաշվարկների տարեկան համախառն եկամուտները կազմել են՝ **2014թ-ին 0, 2015թ-ին 1,222,517 ՀՀ դրամ, 2016թ-ին 124,480,774 ՀՀ դրամ (ընդհանուր՝ 125,703,291 ՀՀ դրամ)**: Ընկերությունը առ 06.03.2017թ. դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի՝ հիմք Հրազդանի ՏՀՏ 20.03.2017թ-ին ներկայացված ՀՀ Վարչական դատարանի (ՎԴ/6383/05/15) վճիռը:

Այսպիսով, ըստ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի Հրազդանի տարածքային հարկային տեսչության կողմից տրամադրած 20.03.2017թ. թիվ 03-358 գրության պարզ է դառնում, որ «Հիդրո Սթորմ» ՍՊԸ-ն 06.03.2017թ-ի դրությամբ չի ունեցել հարկային պարտավորություն, իսկ երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը՝ **125,703,291 ՀՀ դրամ**, պակաս չէ ներկայացված գնային առաջարկից **3.450.000 ՀՀ դրամից**:

Ելնելով վերոգրյալից և զեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

«ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/66» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Հիդրո Սթորմ» ՍՊԸ-ի հայտը չեղյալ համարելու որոշման մասով բողոքը բավարարել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Անդամ՝



Արթուր Ապերյան

Անդամ՝



Գալուստ Գալստյան